ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/17 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան 23.10.2023թ.

ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
բյուջետային գործընթացի պատասխանատու՝ Ա. Համբարձումյան

Անդամներ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ Ս. Թոփակյան

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
բյուջետային գործընթացի պատասխանատու՝ Գ. Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Լ. Ադոնց

---

1. **<u>Տեղեկություն « ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով մրցույթի հայտերի շտկման մասին</u>**

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի և «ԱՆՆԱՌԿԱ» ՍՊԸ-ի կողմից eauction.armeps.am էլեկտրոնային համակարգ մուտքագրված հայտերում առկա էին անճշտություններ:

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը նիստը կասեցվել էր և հայտերի բացման օրը սույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հաղթող մասնակցին էր ուղարկվել՝ անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը: Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է շտկված փաստաթղթերը, որոնք 20.10.2024թ. ներկայացվել է գնահատող հանձնաժողովին: «ԱՆՆԱՌԿԱ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է ահամապատասխանությունները, որոնք հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար: «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում կան անճշտություններ, որի հիման վրա հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար, մասնավորապես՝

  - **30211220/514 Սեղանի համակարգիչ (չափաբաժին 1)**
  - Տեխնիկական բնութագրում նշված է, որ օպերատիվ հիշողությունը պետք է լինի առնվազն 1 հատ 16GB, իսկ առաջարկվող մոդելում այն 2 հատ 8GB է:
  - Առաջարկվող մոդելը ունի առավելագույնը 12 միջուկ, սակայն պահանջվում է նվազագույնը 14 միջուկ:
  - Առաջարկվող մոդելի վրա առկա չէ բնութագրում նշված 1 հատ SD 3 հիշողության քարտ կարդացող սարքը:
  - Առաջարկվող մոդելի միկրոսխեմաների հավաքածունչի կարող ապահովել 2 հատ օպերատիվ հիշողություն յուրաքանչյուր ալիքի համար:
  - Տեխնիկական բնութագրում նշված է Bluetooth 5.3, մինչդեռ առաջարկվող մոդելինը Bluetooth 5.2 է:
  - Տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել 2 Երկու արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, որը չի ներկայացվել:

- **30211200/508 Դյուրակիր համակարգիչ (չափաբաժին 2)**
- Տեխնիկական բնութագրում նշված է 2 հատ USB Type-C®, մինչդեռ առաջարկվող մոդելում այն 1 հատ է:
- Տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել 2 Երկու արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, որը չի ներկայացվել:

- **30211290/501 համակարգչային պլանշետ (չափաբաժին 3)**
- Տեխնիկական բնութագրով նշված է, որ Երաշխիքային սպասարկումը պետք է լինի առնվազն մեկ տարի (երաշխիքային սպասարկման ապահովումը պետք է կատարվի արտադրողի Երևան քաղաքում գտնվող պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները), սակայն Մատակարարի կողմից պահանջվող տեղեկատվությունը չի ներկայացվել:

- **30239170/519 բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային (չափաբաժին 4)**
- Տեխնիկական բնութագրում առաջին էջի տպագրման առավելագույն ժամանակը նշված է 5.5 վայրկյան, իսկ առաջարկվող մոդելինն այն 6.1 վայրկյան է: Առաջին պատճենի տպագրման առավելագույն ժամանակը 6.6 վայրկյան է, իսկ առաջարկվող մոդելինը՝ 6.8:
- Տեխնիկական բնութագրում օպերատիվ հիշողությունը նշված է առնվազն 1GB, իսկ առաջարկվող մոդելում այն 512MB է:
- Չափսերը նշված է 453x464x392մմ ±5, մինչդեռ առաջարկված մոդելինը 430x634x325մմ է:
- Տեխնիկական բնութագրով պահանջվում է երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի ՀՀ-ում պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները), որը չի ներկայացվել:

- **30232130/503 գունավոր տպիչներ (չափաբաժին 5)**
- Տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել 2 Երկու արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, որը չի ներկայացվել:

- **30232110/506 Լազերային տպիչ (չափաբաժին 6)**
- Տեխնիկական բնութագրում նշված է տպագրվող կրիչների նվազագույն և առավելագույն չափսերը՝ 1-ին դարակ 98x148 մինչև 297x432մմ, 2-րդ դարակ 148x210 մինչև 297x354մմ, մինչդեռ առաջարկվող մոդելինը 1-ին դարակը 76.2x127 մինչև 215.9x355.6մմ է, 2-րդ դարակը 105x148 մինչև 215.9x355.9մմ է:
- Առաջարկվող մոդելում կետերի խտությունը տպագրման դեպքում 600x600 dpi է, մինչդեռ տեխնիկական բնութագրում նշված է 1200x1200dpi:

- Տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել 2 երկու արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, որը չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

2.1 Մասնակիցների գնային առաջարկը հետևյալն է.

Հ/Հ համար	Անվանում	Հայտ ներկայացրած մասնակից	Նախա-հաշվային գին	Նախնական առաջարկ		Վերջնական առաջարկ		Մասնակցի կարգավիճակ
				Արժեք /ՀՀ դրամ/	Գին /ՀՀ դրամ/	Արժեք /ՀՀ դրամ/	Գին /ՀՀ դրամ/	
7	անխափան սնուցման աղբյուրներ	**«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ**	**700 000**	700000	840000	500000	500000	
		«ԴՈՆԵՌ» ՍՊԸ		24999999	29999998.8	24999999	29999998.8	**Մերժված**
8	համակարգչի կոշտ սկավառակ	**«Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ**	**225 000**	187000	224400	140000	168000	
		Ա/Ձ Լուսիա Պետրոսյան		185000	222000	169000	202800	
		«ԴՈՆԵՌ» ՍՊԸ		24999999	29999998.8	24999999	29999998.8	**Մերժված**

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. « ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/17 » ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Ընտրված մասնակիցներ ճանաչել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ–ին՝ 7-րդ չափաբաժնի մասով և «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ին՝ 8-րդ չափաբաժնի մասով:

3.2 Մերժել «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի համաձայն:

3.3 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

3.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն /խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը/ «Դոնեռ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3.5 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3.6 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը)

տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որոնց ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ա. Համբարձումյան	
Անդամներ՝	Ս. Թոփակյան	
	Գ. Մարտիրոսյան	
Քարտուղար՝	Լ. Ադոնց	